ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

Ի պատասխան Ձեր 20.08.2024թ. հ. 21/08 գրության՝ տեղեկացվում է, որ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր աուդիտի ենթակա են՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները, խոշոր կազմակերպությունները, միջին կազմակերպությունները, խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է, խոշոր խմբերը, միջին խմբերը:

Միաժամանակ, Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աուդիտի ենթակա կազմակերպությունները և խմբերը (խմբի մայր կազմակերպությունը) պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո:

Համաձայն Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Կազմակերպությունը, որի ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում է իր ինտերնետային կայքում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական http://www.azdarar.am ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական http://www.azdarar.am ինտերնետային կայքում: Ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն հինգ տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացվում է, որ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն ընդգրկված է այդ ցանկում և 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունները պարտադիր աուդիտի է ենթարկվել «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից:

Տեղեկացվուն է նաև, որ «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության հասույթը ձևավորվել է ուղևորափոխադրումից: 2024թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը հասույթը կազմել է 4.581.817,9 հազ. ՀՀ դրամ:

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունը Օրենքի համաձայն հրապարակվել է «Գործընթաց» թերթի (ՁԼՄ) պաշտոնական կայքում և հղումը տեղադրված է http://www.azdarar.am ինտերնետային կայքում:

Աուդիտորական ընկերությունն ընտրվել է մրցութային ընթացակարգով և իրականացվել է աուդիտորական ընկերության կողմից պահանջված հաշվապահական հաշվառման և անձնակազմի կառավարման բաժնի համապատասխան փաստաթղթերի հիման վրա:

Միաժամանակ տեղեկացվում է, որ վերջին 4 տարիների ընթացքում իրականացվել է աուդիտ և հրապարակվել է վերը նշված կայքերում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ